ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿՈԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Տավուշի մարզ Նոյեմբերյան համայնք
գյուղ Կոթի, 2 փող. շ. 9 ,
էլ.փոստ/ koti2007@mail.ru

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՍԱՄՍՈՆ ԱՂԱԲԵԿԻ ՍԱՐԱՏԻԿՅԱՆԻՆ
ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծնունդով Կոթեցի Սամսոն Աղաբեկի Սարատիկյանը իր ծննդավայրում իրականացրել է բազմաթիվ բարեգործական ներդրումներ:

Մասնավորապես նրա ֆինանսական աջակցությամբ ստեղծվել էր ֆուտբոլային թիմ, որը մասնակցում էր հանրապետական մրցաշարերի: Նրա համաֆինանսավորմամբ վերանորոգվել է Կոթիի մսուր մանկապարտեզի շենքը, գյուղական բժշկական ամբուլատորիան, ինչպես նաև ամեն տարի Կոթիում ծնված և Կոթիում բնակվող նորածինները, որպես Ամանորյա նվեր ստանում են դրամական աջակցություն: Նրա ներդրումների շնորհիվ Կոթիի միջնակարգ դպրոցին նվիրվել է դպրոցական գույք, իսկ ներկայումս էլ կառուցվում է մի շատ գեղեցիկ մանկական պուրակ, որը շուտով ավարտին կհասցնվի: Բարերարը իր օգնությունն է ցուցաբերել նաև բազմաթիվ համագյուղացիների և այլոց, որոնք ունեցել են դրա կարիքը:

Ելնելով այս ամենից և հաշվի առնելով նրա սերն ու նվիրումը հարազատ գյուղի նկատմամբ, ներկայացվում է առաջարկություն Սամսոն Աղաբեկի Սարատիկյանին Կոթի բնակավայրում իրականացրած բազմաթիվ բարեգործական ներդրումների և համայնքի զարգացմանը նպաստելու համար շնորհել Նոյեմբերյան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:

ԿՈԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ